# ՆՈՐ ՋՈՒՂԱ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԻՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԺԵ ՏԱՐԻ ԹԻՒ 121 ՅՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ 2017











Գործ՝ Գեղանի Առաքելեանի

# ԹՈՒՌ ԼԻԴԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔՈՒՄ

Հինաւուրց Ս. Ամենափրկիչ վանքը երկար տարիներ է, ինչ իր առանցքային դերն է զբաղեցնում Սպահան քաղաքի զբօսաշրջութեան ոլորտի զարգացման գործում եւ զբօսաշրջիկների հետաքրքրութեան կիզակէտում յայտնուելով, բազմաթիւ այցելուների է գրաւում սոյն քաղաք, յատկապէս Նոր Ջուղա կոչւող հիմնականում հայաբնակ քաղաքամաս:



Վանքի համալիրն իր գեղեցիկ ու իւրայատուկ ճարտարապետութեամբ, ինչու չէ նաեւ ,Ս. Յովսէփ Արեմաթացիե եկեղեցու անզուգական որմնանկարչութիւններով, «Խաչատուր վրդ. Կեսարացի» թանգարանի եզակի նմուշներով ու Հայոց Ցեղասպանութեան տաղաւարով, Մեծ Եղեռնի յուշարձանով եւ վերջերս կանգնեցւած խաչքարով, մեծ ուշադրութեան է արժանացել իրանցի եւ օտարերկրացի այցելուների կողմից՝ լայն առիթ ընձեռելով թեմի ազգային իշխանութեանը՝ հայկական մշակոյթի, պատմութեան եւ հայոց պահանջատիրութեան ճանաչեցման շրջագծում իր աշխատանքներն իրագործելու ուղղութեամբ:

Վանքը եւ նրա զանազան բաժինները թուռ լիդերներին առաւել ծանօթացնելու եւ այս բնագաւառում նրանց գիտելիքների բազան հարստացնելու նպատակով, Սպահանի հայոց թեմի Ազգային առաջնորդարանի Հանրային կապի գրասենեակի նախաձեռնութեամբ ու կազմակերպութեամբ եւ Թեմական խորհրդի հովանաւորութեամբ, երկուշաբթի եւ երեքշաբթի՝ յուլիսի 3-ի ու 4-ի երեկոյեան, կազմակերպւեցին վերապատրաստման դասընթացներ:

Երկու օրերի ընթացքում բացման խօսքով հանդէս եկաւ Հանրային կապի գրասենեակի պատասխանատու Մանիա Ղուկասեանը, ընդգծելով յատկապէս՝ զբօսաշրջութեան ոլորտի զարգացման եւ զբօսաշրջիկ-տեղացի բնակիչ փոխ-յարաբերութեան կարեւորութիւնը, սոյն բնագաւառի լայն ազդեցութիւնը տնտեսութեան բարգաւաճման գործում: Դասարանները տեղի ունեցան Ս. Ա. վանքում. «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցում, վանքի պատմութեան, ճարտարապետութեան եւ որմնանկարչութիւնների թեմայի շուրջ դասախօսեց պատմութեան մասնագէտ Կարին Տէր-Մարտիրոսեանը, իսկ «Խաչատուր վրդ. Կեսարացի» թանգարանում, թանգարանի պատմութեան եւ ցուցադրւած հնութիւնների մասին բացատրութիւններով ելոյթ ունեցաւ Մշակութային ժառանգութեան, ձեռարւեստի եւ զբօսաշրջութեան կազմակերպութեան աշխատող, զբօսաշրջութեան ոլորտում մարկետինգի եւ պրոպականդի մասնագէտ Զոյեա Խաչատրեանը:





Մասնակիցների թիւը 250 հոգի էր, որոնք բաժանւել էին առանձին չորս խմբերի միջեւ. իւրաքանչիւր օր դասընթացներին մասնակցեցին երկուական խմբեր:

Միջոցառմանը ներկայ էին նաեւ Թեմական խորհրդի ներկայացուցիչները, Սպահան նահանգի՝ զբօսաշրջութեան եւ թանգարանների խուրհուրդների տնօրինութիւնները, հայ թուռ լիդերներն ու աւիատոմսեր վաճառող եւ թուռ կազմակերպող ընկերութիւնների տնօրէնները:





## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԵՒ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՏՆՕՐԷՆՆԵՐԻ ՀԵՏ

Չորեքշաբթի՝ 2017 թւականի յուլիսի 26-ի առաւօտեան Ս. Ամենափրկչեան Վանքի Պատգամաւորական Ժողովի ժողովասրահում, Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական Ժողովի ատենապետ պրն. Թաթուլ Օհանեանի, Թեմական Խորհրդի անդամներ դկտ. Նորայր Թումանեանի եւ տկն. Սոնիկ Բաղումեանի միջոցով հիւրընկալւեցին Միջազգային հարցերում Սպահանի Պետական համալսարանի տնօրէնի խորհրդական եւ միջազգային գիտական համագործակցութիւնների գրասենեակի տնօրէն դկտ. Թայեբին, Օտար լեզուների ֆակուլտետի տնօրէն դկտ. Ճոքրեանը եւ հայերէն-գերմաներէն գիտական խմբի դասախօս դկտ. Մալեք Մոհամադին:



Հանդիպման գլխաւոր օրակարգն էր Սպահանի Պետական համալսարանի Հայագիտական ամբիոնին նպաստելուն ուղղւած համագործակցութիւնները Համալսարանի եւ Սպահանի հայոց թեմի միջեւ, յատկապէս առաջիկայ ուսումնական տարւայ համար դասախօսական կազմի համալրման աշխատանքները, որի կապակցութեամբ շուրջ մէկ ամիս առաջ տեղի ունեցած հանդիպման ընթացքում համաձայնութիւններ էր ձեռք բերւել Երեւանի Պետական համալսարանի Իրանագիտութեան ամբիոնից կամ Բանասիրական ֆակուլտետից ասպիրանտների ներգրաւման, ինչպէս նաեւ հիւրդասախօսներ հրաւիրելու մասին:

Հանդիպմանը, որն ընթացաւ փոխգործակցութեան եւ բարեկամական ջերմ մթնոլորտում, վեր հանւեցին բոլոր այն հնարաւորութիւնները, որոնք սկզբունքօրէն եւ օրէնքով գոյութիւն ունեն համալսարանի որոշումների եւ աշխատանքային կանոնների մէջ, նաեւ թեմիս այն կարելիութիւնները, որոնք մեծապէս կը նպաստեն ամբիոնի աշխատանքների զարգացման եւ աշխուժացմանը, համալսարանական այս ճիւղի ուսանողների գիտական վերելքին եւ հայ ժողովրդի մշակոյթի եւ գրականութեան հետ առաւել ծանօթացմանը:

Հանդիպման աւարտին որոշւեց ներկայ եւ նախորդ երկու նիստերի ընթացքում արծարծւած խնդիրները եւ առաջարկութիւնները ի մի բերել մի պաշտօնական արձանագրութեան մէջ, որը հիմք կը հանդիսանայ օր առաջ կազմելու աշխատանքային ծրագիր եւ ժամանակացոյց, իսկ դա գործադրելու համար կեանքի կը կոչւեն աշխատանքային համապատասխան խմբեր՝ համալսարնից եւ թեմիցս ներկայացուող անձնակազմի միջոցով:



Սպահանի Համալսարանի պատւիրակութիւնը այնուհետեւ այցելեց Վանքի Ս. Ներսէս Շնորհալի գրադարան, որտեղ գրադարանավարուհի Վերգինէ Միրզախանեանի միջոցով ներկայացւեց գրադարանի հնարաւորութիւնները, արդիական պայմաններում եւ միջոցներով դիմողներին մատուցող ծառայութիւնները, որոնք տրամադրելի են նաեւ համլսարանի Հայագիտական ճիւղի ուսանողներին, ինչը մեծապէս գնահատւեց համալսարանի պատասխանատուների կողմից: Աւիթ եղաւ նաեւ այցելելու արխիւանոց, որտեղ գրասենեակի պատասխանատու Թովմա Գալստանեանի միջոցով բացատրւեց պահւող արխիւների գիտա-հետազօտական եւ պատմական արժէքը՝ հայագիտական ուսումնասիրութիւնների համար:

## ԶԲՕՍԱՇՐՋԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՅՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՒՈՂ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՒԵՑԻՆ ՊԱՏՄԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԷՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳ. ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆՈՒՄ



Սպահանի հայոց թեմի Ազգ. Առաջնորդարանի Հանրային կապի գրասենեակի նախաձեռնութեամբ եւ Թեմական խորհրդի հովանաւորութեամբ, զբօսաշրջիկական ուղեցոյցների համար կազմակերպւող վերապատրաստման դասընթացների շրջագծում, կիրակի եւ երկուշաբթի՝ յուլիսի 30 եւ 31-ի առաւօտեան, այս անգամ որպէս պատմա-մշակութային արժէք ունեցող մի վայր, ճանաչողական այցելութիւն կատարւեց Նոր Ջուղայի հայոց ազգ. գերեզմանատուն:

Ծրագրին, որին ներկայ էին նաեւ Թեմական խորհրդի ներկայացուցիչները, մասնակցում էին թւով 60 ուղեցոյցներ, ովքեր բաժանւել էին երկու խմբերի՝

յաջորդական երկու օրերի ընթացքում ուկնդրելու դասախօսութիւնը եւ ճանաչողական շրջայց կատարելու գերեզմանատան տարածքում: Սոյն դասաւրանի համար հրաւիրուել էր Արգին Աբնուսեանը, ով իր ուսումնասիրութիւնների եւ Թեմի Հայոց Գերեզմանատան բարեզարդման մարմնի ատենապետ Արման Սիմոնեանից քաղած օգտաշատ տեղեկութիւնների հիմամբ, յաջողեց մասնակիցներին ոչ միայն ծանօթացնել գերեզմանատան պատմական անցեալին ու տարբեր բաժիններին, այլեւ նրանց իրազեկել Հայաստանեայց Առաքելական եկեղեցու թաղման կարգի, հայկական խաչքարերի, գերեզմանաքարերի տեսակների ու դրանց վրայ քանդակուած նախշերի եւ մի շարք առնչակից այլ տեղեկութիւնների մասին:



Բացատրութիւնների աւարտին բոլորն այցելեցին գերեզմանատանում թաղուած անուանի հայ եւ օտարերկրացի աննջեցեալներ՝ Նոր Ջուղայի պատմաբան Յարութիւն Տէր-Յովհանեանի, Սբ. Ամենափրկիչ վանքի եկեղեցու նկարչութիւնների հեղինակներից Յովհաննէս Տիեզերալոյսի (Մրքուզ), թատ. նագարան պատրաստող Յովհաննէս Աբգարեանի, Կարապետ Արքեպիսկոպոսի (ծագյարոյց), Ղաջարների թագաւորութեան ժամանակաշրջանի ճարտարագէտ եւ լուսանկարիչ Էռնեստ Հոլթսերի, Սեֆեւեան թագաւորական ընտանիքի գլխաւոր ժամագործ Ժաքոբ Ռուսոյի եւ ժամագործ Ռուդոլֆ Ծթողերի ու մի շարք այլ հանրայայտ անձանց շիրիմներ, որտեղ էլ ծանօթացան նրանց կենսագրականներին: Մասնակիցները այցելեցին նաեւ Պարտադրեալ պատերազմի հայ նահատակների շիրիմները եւ Արեւմտեան Հայաստան կատարած ուխտագնացութեան հանրակառքի վթարի հետեւանքով զոհուածների համար կանգնեցուած յուշակոթողին:



Հարկ է նշել որ ծրագրի իրականացմանը մեծապէս նպաստել էր Հայոց Գերեզմանատան բարեզարդման մարմինը:

## ԱՀԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ԶՈՀԵՐԻ ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈՅ ՍՊԱՀԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ



Ահաբեկչութեան զոհերի յիշատակի եւ մեծարման օրուայ առթիւ, ահաբեկչութեանը զոհ գնացած աւելի քան 17 հազար իրանցիների յիշատակին կազմակերպուած «Համբերատարութեան տիպարներ» խորագիրը կրող համագումարը տեղի ունեցաւ ուրբաթ՝ 18 օգոստոս 2017 թւականին, Սպահանի Բժշկական համալսարանում:

Յանուն Սպահանի հայոց թեմի ազգային իշխանութեան, միջոցառմանը մասնակցում էին Չահինշահրի հոգեւոր հովիւ՝ Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը եւ Թեմական խորհրդի անդամ՝ Նորայր Թումանեանը:

Համագումարին ներկայացուած ելոյթների շարքին, հանդէս եկաւ գերպ. Հայր Սուրբը, ով մեծարելով ահաբեկչութեան զոհերի յիշատակը, նշեց. «Ահաբեկչութիւնը եւ դրանից բխող հետեւանքները, այն հիմնական ու առաւել վտանգաւոր հիմնախնդիրներից են, որոնց բախւում է ժամանակակից աշխարհը: Մեր օրերի իրողութիւնն է այն փաստը, որ ահաբեկչութիւնն էլ աւելի է սպառնում երկրների մեծ մասի անվտանգութիւնը՝ հանգեցնելով հսկայական քաղաքական, տնտեսական ու բարոյական կորուստների: Նրա զոհ կարող է դառնալ ցանկացած երկիր, իւրաքանչիւր մարդ»:



Նա ընդգծելով Իրանի Իսլամական հանրապետութեան կողմից ահաբեկչութեան դէմ իրականացւող գործունէութիւնը եւ հաշտարար ու խաղաղասէր դիր-

քորոշումները, նշեց. «Վերջերս մեր երկրում տեղի ունեցած ահաբեկչութիւնները՝ ատոմական գիտնականների ահաբեկումը եւ խորհրդարանում կատարուած ահաբեկչութիւնը արդիւնք են այն իրականութեան, որ ահաբեկիչները չհանդուրժելով Իրանի Իսլամական հանրապետութեան եւ ժողովրդի, Աստուծոյ եւ մարդկութեան հանդէպ ունեցած սէրն ու յարգանքը, ուզեցին խաթարել մեր անդորրութիւնն ու խաղաղութիւնը, սակայն չյաջողեցին»: Ծարունակութեան մէջ Հայր Սուրբը շեշտեց, որ ահաբեկչական խմբաւորումներն ակունք են ստացել մեծապետական ուժերի եւ երկրների շահերից ու նպատակներից, եւ սնուցւում, զինւում եւ հովանաւորւում են հենց այս ուժերի միջոցով, որոնք ձգտում են պառակտում եւ հակամարտութիւն հրահրել տարբեր կրօնների, մշակոյթների, քաղաքակրթութիւնների եւ ժողովուրդների միջեւ:

Հայր Սուրբը յիշատակելով այն փաստը, որ 20-րդ դարասկզբին հայ ժողովուրդն առաջինն է զոհ գնացել մարդկութեան դէմ իրականացուած ոճրին՝ առաջին ցեղասպանութեանը, նշեց, որ. «Ներկայիս նոյնպէս Միջին Արեւելքում սփռուած հայ համայնքները կրկին ահաբեկչական գործողութիւնների եւ խմբաւորումների հարուածի տակ են առնուած եւ կրկին զոհւում են կամ տասնեակ հազարներով տարագրւում են իրենց երկրներից, ինչին ականատես ենք եղել յատկապէս Սիրիայում»:

Գերապատիւ Հայր Սուրբն իր խօսքն եզրակացնելով, ասաց. «Կոչ եմ ուղղում այստեղ ներկաներին եւ Իրանի մեր սիրեցեալ ժողովրդին, լուռ չմնալ ահաբեկչութեան այն մեծ չարիքների դէմ, որոնք կատարւում են այսօր. սիրտ սրտի եւ ձեռք ձեռքի, միակամ բռունցքով պայքարենք աշխարհի անարդարութեանց եւ ահաբեկչութեանց դէմ, փաստելով որ մենք մէկ Աստծու ժողովուրդ ենք եւ մեր Աստուածը սիրոյ, խաղաղութեան, համերաշխութեան եւ արդարութեան Աստուածն է»:

Միջոցառումը կազմակերպել էր Ահաբեկչութեան զոհերի պաշտպանութեան Սպահանի գրասենեակը:

Յատկանշական է, որ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը 16 յունիս 2011 թւականին ընդունած բանաձեւի համաձայն, 19 օգոստոսը հռչակել է «Ահաբեկչութեան զոհերի յիշատակի եւ մեծարման օր» եւ ՄԱԿ-ին անդամակցող բոլոր երկրներին, Միաւորուած ազգերի համակարգի, միջազգային եւ Քաղաքացիական հասարակութեան բոլոր կազմակերպութիւններին հրաւիրել է պատշաճ միջոցառումներով յիշատակել այս օրը:

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

Կրօնների երկխօսութեան կենտրոնի եւ Շուէյցարիայի եպիսկոպոսների խորհրդի երկխօսութեան 5-րդ շրջանի նիստին մասնակցելու նպատակով Շուէյցարիայից Իրան ժամանած պատուիրակութիւնը թւականիս օգոստոսի 29-ին այցելեց Ս. Ա. Վանք:

Պատուիրակութեանը մաս էին կազմում Շուէյցարիայի եպիսկոպոսների խորհրդի անդամները՝ գլխաւորութեամբ նոյն խորհրդի մշակութային եւ կրօնների երկխօսութեան փոխ-առաջնորդ Ալէն Դի Ռայմիի եւ Կրօնների երկխօսութեան կենտրոնի տնօրէն հոջ. Մոհամմադ Մեհդի Թասխիրին:



Նոյն օրը Ազգային առաջնորդարանը հիւրընկալեց Կրօնների եւ դաւանանքների համալսարանի միջոցով կազմակերպուած համաժողովի մասնակիցներին:

Ազգային առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում հիւրերին ընդունեցին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը եւ Թեմական խորհրդի փոխ-ատենապետ՝ դկտ. Վաչիկ Հայրապետեանը:

Երկու հանդիպումների ընթացքում, ծանօթութեան գծով տեղեկութիւններ փոխանցւեցին կողմերի միջեւ, եղան հարց եւ պատասխաններ: Այնուհետեւ արծարծւեցին տարբեր խնդիրներ, որոնք հիմնականում վերաբերում էին Իրանի հայկական համայնքների եւ տեղի իշխանութեան միջեւ առկայ յարաբերութեանը եւ որպէս կրօնական փոքրամասնութիւն՝ հայութեանը վերապահուած իրաւունքներին, որոնց տրւեց համապարփակ բացատրութիւն:



## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ 3-ՐԴ ՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱՐԿ

Հինգշաբթի՝ 31 օգոստոս 2017 թուականի առաւօտեան, Սպահանի հայոց թեմի Ազգային առաջնորդարանի պատուիրակութիւնն այցելեց Ուսումնա-դաստիարակութեան 3-րդ շրջանի հիմնարկ՝ շնորհաւորելու նորընտիր տնօրէն Մեհդի Էսմայիլիին:



Պատուիրակութեանը մաս էին կազմում Թեմական խորհրդի ատենապետ՝ Վարուժ Մինասեանը, փոխ-ատենապետ՝ Վաչիկ Հայրապետեանը եւ խորհրդի անդամ՝ Վահիկ Թորոսեանը:

Հանդիպման սկզբում Վաչիկ Հայրապետեանը փոխանցեց Խորհրդի շնորհաւորանքի խօսքը եւ յաջողութեան մաղթանքները, ապա ներկայացրեց պատուիրակութեան անդամներին եւ բացատրութիւններ փոխանցեց հայոց ազգային դպրոցների կացութեան եւ ընթացքի մէջ գտնուող մի շարք փոփոխութիւնների կապակցութեամբ:

Ուսումնա-դաստիարակութեան հիմնարկի տնօրէնը եւս իր հերթին յաջողութիւն մաղթեց խորհրդին՝ իր որդեգրած ուղղում, համոզմունք յայտնելով, որ արձանագրուելու են նորանոր վերելքներ եւ համագործակցաբար իրականութիւն են դառնալու ճշտուած նպատակները:

## ԱՆՎՃԱՐ ԳՐՔԵՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԵՒ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔ ԱՅՑԵԼՈՂՆԵՐԻՆ

Ընթերցանութիւնը զարգացնելու համար, վերջին տարիներին Ս. Ամենափրկիչ վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանում հաւաքուած նոյնանուն գրքերի յաւելեալ օրինակները անվճար բաշխուեցին ընթերցասէր անհատներին՝ այս նպատակով վանքի շրջափակում կազմակերպուած եռօրեայ գրքի ցուցահանդէսի ընթացքում: (2017 թուականի օգոստոսի 28-ից 30-ը)



## Ս. ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ՝ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ



Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցու 3-րդ Տաղաւար տօնի՝ Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Պայծառակերպութեան (Վարդավառ) առթիւ, կիրակի՝ յուլիսի 23-ի առաւօտեան, Փերիոյ գաւառի Բոլորան գիւղի Ս. Ղուկաս եկեղեցում, ս. եւ անմահ պատարագ մատուցւեց, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի նախագահութեամբ: Օրայ պատարագիչն էր արժ. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանը, իսկ արարողութեան իրականացմանը մասնակից էին՝ արժ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը, դպրաց դասի ներկայացուցիչներն ու Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը: Եկեղեցում ներկայ էին հոծ թւով հաւատացեալներ. թեմի Կրօնական խորհրդի անդամներ՝ ատենապետ Վարուժ Մովսիսեանն ու Սաքօ Տէր-Յովհաննիսեանը, Բոլորան գիւղի հայ համայնքի անդամները եւ Վարդավառը նշելու նպատակով գիւղում կեցութիւն հաստատած Նոր Ջուղայից, Շահինշահրից եւ իրանահայ այլ թեմերից հայորդիներ:

Ս. պատարգի ընթացքում առաջնորդ Հայր Սուրբը

բնաբան ունենալով Մատթէոսի աւետարանից հետեւեալ հատուածը՝ «Վեց օր յետոյ Յիսուսն իր հետ վերցրեց Պետրոսին, Յակոբոս եւ Յովհաննէս եղբայրներին եւ նրանց հանեց մի բարձր լեռ, որտեղ նրանք առանձին մնացին», հիմնականում անդրադարձ ունեցաւ Քրիստոսի այլակերպութեանը: Նա կարեւորութեամբ ընդգծելով, որ Յիսուսի այլակերպութեան վկաները եղան նրա երեք առաքեալները, որոնց իր հետ էր վերցրել ինքը՝ Քրիստոսը, այսպէս շարունակեց. «Այս երեք առաքեալների ընտրութիւնը խտրութեան կամ աչառութեան հետ կապ չունէր, այլ ազատ կամքի եւ մտերմութեան



արտայայտութիւն էր: Դա էական եւ շատ պարզ մի բնազդ է, որը կիրառւում է մարդկային կեանքի ընթացքում: Մենք եւս մեր բարեկամներից, ծանօթներից եւ ազգականներից ընտրում ենք ընկերներ, մօտիկներ ու մտերիմներ»:

Հայր Սուրբն իր խօսքի շարունակութեան մէջ նշելով, որ գոյութիւն ունի երկու տեսակի ընտրութիւն՝ կարճ եւ ժամանակաւոր, որը հիմնւած է շահի եւ անձնական գործերի վրայ, իսկ երկար ու մշտական, որն առաջանում է սիրուց եւ յարգանքից, յորդորեց առաւել զգօնութիւն ցուցաբերել ընկերների ու մտերիմների ընտրութեան հարցում եւ Վարդավառը պատեհ առիթ համարելով, փորձել սրբագրել կեանքն ու գործերը եւ աստուածահաճոյ արարքներով օրինակ հանդիսանալ ու դարձի բերել ընկերներին ու մտերիմներին:

Հոգեպարար արարողութիւնից յետոյ առաջնորդ Հայր Սուրբը մօտենալով եկեղեցու շրջափակում բոլորւած ժողովրդին՝ իր օրհնութիւնը փոխանցեց նրանց:

Այլակերպութեան տօնի առթիւ ս. եւ անմահ պատարագ մատուցւեց նաեւ Նոր Ջուղայի Ս. Յովհաննու եկեղեցում՝ ձեռամբ արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանի եւ երգեցողութեամբ «Շուշանիկ» հոգեւոր երգչախմբի:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ՆՇՈՒԵՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԸ



Կիրակի՝ օգոստոսի 13-ի առաւօտեան, Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ս. Մինաս եւ Ս. Յովհաննու եկեղեցիներում հանդիսաւորութեամբ նշւեց Հայաստանեայց Առաքելական սուրբ եկեղեցու հինգ տաղաւար տօներից չորրորդը՝ Ս. Աստուածածնի վերափոխման տօնը (Խաղողօրհնէք):

Ս. Ստեփանոս եկեղեցում ս. պատարագը մատուցւեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի ձեռամբ: Պատարագին ներկայ էին՝ եկեղեցու ծխատէր, արժ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը եւ դպրաց դասի ներկայացուցիչները: Երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

Գերպ. Հայր Սուրբը պատարագի ընթացքում տւած իր քարոզի սկզբնական բաժնում անդրադառնալով Ս. Աստուածածնի վերափոխման տօնի խորհրդին՝ ընդգծեց, որ այս տօնը պատեհ առիթ է, որպէսզի մեր խորհրդածութեան առանցքը դարձնել ծնող-զաւակ փոխադարձ հոգածութիւնը: Այնուհետեւ ընդգծելով «Պատուիր քո հօրն ու մօրը» Աստծոյ պատուիրանը եւ մատնանշելով այն փաստը, որ զաւակները ծնունդ առնելուց ի վեր վայելում են իրենց ծնողների ուշադրութիւննն ու գուրգուրանքը, յորդորեց՝ տօնը յարմար առիթ դարձնել՝ սոյն աստուածային պատուիրանը շարունակ մտաբերելու եւ գործադրելու համար՝ սիրելով ու յարգելով ծնողներին, հոգածութիւն ցուցաբերելով նրանց նկատմամբ եւ չմոռանալով, որ նրանք իրենց ամբողջ կեանքը զոհում են իրենց զաւակների համար:

Վերջում ներկայ հաւատացեալներն հաղորդութիւն ստացան, ապա պատարագիչ Հայր Սուրբի միջոցով օրհնւած խաղողի ողկոյզները բաժանւեցին ժողովրդին:





## ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԸ՝ ՓԵՐԻՈՅ ԳԱՒԱՌԻ ԽՈՅԳԱՆ ԳԻՒՂԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ.
## ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ 18-ՐԴ ԴԱՐԻ ՊԱՏՄԱԳԻՐ Տ. ՍՏԵՓԱՆՈՍ ԵՐԷՑԻ

Հայաստանեայց Առաքելական սուրբ եկեղեցու հինգ տաղաւար տօներից չորրորդի՝ Ս. Աստուածածնի Վերափոխման տօնի (Խաղողօրհնէք) առթիւ հանդիսաւոր սուրբ պատարագ մատուցւեց Փերիոյ գաւառի Խոյգան գիւղի «Ս. Աստուածածին» եկեղեցում՝ նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի, ուրբաթ՝ 2017 թւականի օգոստոսի 18-ի առաւօտեան: Օրւայ պատարագիչն էր արժ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը. երգեցողութեամբ հանդէս եկան Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախմբի անդամուհիները:

Արարողութեան իրականացման գործում մասնակցութիւն ունէին եկեղեցական ու դպրաց դասերը, իսկ ներկայ էին՝ թեմիս Պատգամաւորական ժողովի փոխատենապետ Մկրտիչ Աւետումեանը, Կրօնական խորհրդի անդամներ՝ ատենապետ Վարուժ Մովսիսեանն ու Սաքօ Տէր-Յովհաննիսեանը եւ հոծ թւով հաւատացեալ ուխտաւորներ:



Ս. Պատարագի ընթացքում առաջնորդ Հայր Սուրբն իր յաւուր պատշաճի քարոզն ուղղեց ներկայ հաւատացեալներին, ուր անդրադառնալով Աստուածամօր վերափոխմանը, նշեց, թէ Քրիստոսի համբարձումից 12 տարիներ անց, երբ իր մահկանացուն կնքեց Սուրբ Մարիամը, Տէրը գերեզմանից վերցրեց իր մօր մարմինը եւ այն փոխադրեց երկինք, ուր դարձեալ միաւորելով իր հոգու հետ՝ յարութիւն տւաւ նրան: Թեմակալ առաջնորդն իր խօսքի շարունակութեան մէջ ընդգծելով, որ Քրիստոսն իր ամբողջ կեանքում հնազանդ եղաւ «Պատուիր քո հօրն ու մօրը» աստուածային պատուիրանին, շեշտեց, թէ Տէրը տիպար օրինակ է մեզ համար՝ ծնողի նկատմամբ հոգածութիւն ցուցաբերելու առումով: Քարոզիչ հայրը յորդորեց՝ կատարելով որդիական պարտականութիւնները, խնամել ու հոգալ ծնողներին՝ նրանց աղօթքների շնորհիւ Աստծոյ ողորմութեանն ու օրհնութեանն արժանանալու համար:

Վերջում գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը կատարեց աւանդական Խաղողօրհնէքի կարգը, որից յետոյ օրհնւած խաղողների կապոցները բաժանւեցին ներկաներին:

Հոգեպարար արարողութիւններն աւարտելուն պէս, առաջնորդ Հայր Սուրբը քահանայից ու սարկաւագաց դասերի, ինչու չէ նաեւ ազգային մարմինների ներկայացուցիչների ընկերակցութեամբ, մեկնեց Փերիոյ գաւառի Հազարջրիբ գիւղի հայոց գերեզմանատուն, ուր Թեհրանի Փերիոյ Կրթ. միութեան նախաձեռնութեամբ եւ հրաւէրով, կատարեց սոյն գերեզմանատանն աղյաւէտ հանգիստ առած պատմագիր Ստեփանոս Երէցի (Տ. Ստեփանոս քահանայ, ծնունդ՝ 1746թ., վախճան՝ 1813 թ.) շիրիմի վրայ տեղադրւած նոր գերեզմանաքարի օրհնութեան եւ հանգուցեալի յիշատակին կայացած հոգեհանգստեան արարողութիւնները:

Սոյն եկեղեցական կարգերին ներկայ էին նաեւ նախաձեռնող միութեան ներկայացուցիչներն ու մի շարք հաւատացեալ ժողովուրդ:

Երէցը ծնւել է Հազարջրիբ գիւղում, ապա մանկութիւնն իր ծննդավայրում անցկացնելուց յետոյ անցել է Նոր Ջուղա՝ կրթւելու համար: Պատմագիրը հեղինակն է «Հանգիտագիրք» ձեռագիր մատեանի: Տ. Ստեփանոս քահանայի մասին տեղեկութիւնները հրապարակւել են 1949 թւականին անւանի բանասէր Լեւոն Գ. Մինասեանի ջանքերի շնորհիւ, իսկ նրա շիրիմը յայտնաբերւել է Թեհրանի Փերիոյ կրթ. միութեան անդամների միջոցով: Տարիներ է, ինչ սոյն միութեան անդամներից ուխտագնացութիւն են կատարում դէպի Հազարջրիբ գիւղի գերեզմանատուն՝ իրենց նախնիների գերեզմաններին այցելելու նպատակով:

«Պատմութիւն Նոր Ջուղայիե» գրքի հեղինակ Յարութիւն Տէր-Յովհանեանն իր աշխատութիւնը գրի առնելիս բաւականաչափ օգտւել է «Հանգիտագիրք»-ում յիշատակւած տեղեկութիւններից:





## ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԲԱՐԻ ԵՐԹԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 8-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՊԱՏԻՒՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Ընդառաջելով ՀՀ Կրթութեան եւ գիտութեան նախարարութեան կողմից կազմակերպւած օլիմպիադայի ծրագրին, ինչպէս նախորդ տարիների, այս տարի եւս թեմիս Կրթական խորհրդի նախաձեռնութեամբ եւ Թեմական խորհրդի հովանաւորութեամբ կազմակերպւեց Նոր Ջուղայի հայոց ազգ. «Քանանեան» եւ «Կատարինեան» միջնակարգ աղջկանց ու տղայոց դպրոցների գերազանցիկ աշակերտների մասնակցութիւնը՝ Հայաստանում կայանալիք Հայագիտական համահայկական 8-րդ օլիմպիադային, որը տեղի է ունենալու օգոստոսի 4-ից 10-ը, Աղւերանում:

Այս նպատակով Կրթական խորհրդի եւ երկու դպրոցների պատասխանատու կազմերի նախաձեռնութեամբ մրցոյթ անցկացւեց 14-ից 17 տարեկան գերազանցիկ աշակերտների միջեւ, որի արդիւնքում ընտրւեցին լաւագոյն 9 աշակերտները, իսկ հետագայում աշակերտուհիներից մէկը հրաժարւեց: Նոր Ջուղայի գերազանցիկների խումբը բաղկացած 5 աղջիկներից եւ 3 տղաներից Հայաստան մեկնեց հինգշաբթի՝ օգոստոսի 3-ին: Պատւիրակութեանը, որպէս պատասխանատուներ ընկերակցում են «Քանանեան» դպրոցի ուսուցչուհի Անահիտ Սարհադեանը եւ Կրթական խորհրդի անդամ Նարբէ Զարդն Դաւուդը:

Մեկնումից մէկ օր առաջ, չորեքշաբթի՝ օգոստոսի 2-ի առաւօտեան, Ս. Ամենափրկիչ վանքի Ծաղկեայ դահլիճում աշակերտ-ուհիներին, պատասխանատուներին եւ պատկան ուսուցիչներին ու աշակերտների ծնողներին ընդունեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը: Հանդիպմանը ներկայ էին նաեւ Թեմական ու Կրթական խորհուրդների ներկայացուցիչները:

Սկզբում առաջնորդ Հայր Սուրբը դրւատանքի խօսք ուղղեց Կրթական խորհրդին եւ Խորհրդի գրասենեակի պատասխանատու Մադլէն Ղարիբեանին, ինչպէս նաեւ Թեմական խորհրդին ու վերոնշեալ դպրոցների տնօրէնութիւններին եւ ուսուցչական կամզերին՝ համահայկական այս օլիմպիադային աշակերտների մասնակցութիւնն ապահովելու ուղղութեամբ կատարած ջանադիր աշխատանքի համար, ապա աշակերտներից տեղեկանալով իրենց նախասիրութիւնների մասին, նրանց յորդորեց՝ տէր դառնալ իրենց շնորհքներին եւ ամենուրեք բարձր պահել Սպահանի հայոց թեմի անունը:

Յաջորդիւ յանուն Թեմական խորհրդի արտայայտւեց Սոնիկ Բաղումեանը, ով շեշտելով, որ թեմի ամենակարեւոր սկզբունքներից մէկը հայրենիքի հետ կապերի զարգացումն ու յարատեւութիւնն է, աւելացրեց՝ այս միջոցառումը պատեհ առիթ է, որպէսզի մասնակիցները, պարզապէս հայրենիք այցելելուց բացի, իրենց հասակակիցների հետ, ովքեր օլիմպիադայի շրջագծում հաւաքւելու են աշխարհի տարբեր երկրներից եւ Հայաստանից, աւելի նպատակաուղղւած կեպրով կապ հաստատեն՝ կրթական, մշակութային ու գիտական ոլորտներում:

Խօսք առնելով Կրթական խորհրդի անունից, փոխատենապետուհի Սաթենիկ Աւետումեանը ընդգծեց, որ յաջողութիւններ արձանագրելուց բացի, մասնակիցներն այս առիթը պէտք է օգտագործեն իրենց գիտելիքների բազան ընդլայնելու, վարժւելու հաւաքական կեանքին եւ իրենց կեանքի լաւագոյն յիշողութիւններն ու յուշերն արձանագրելով յաջող արդիւնքներով վերադառնան Նոր Ջուղա:

Ելոյթների շարանում «Քանանեան» դպրոցի փոխտնօրէն Ռիմա Սիմոնեանը, ով Կրթական Խորհրդի կողմից նշանակւած էր, որպէս Օլիմպիադայի ուսումնական ծրագրի նախապատրաստական աշխատանքների պատասխանատու, բացատրութեամբ հանդէս եկաւ դասընթացների կազմակերպման շրջագծում կատարւած աշխատանքների մասին: Շեշտելով յատկապէս, որ հայագիտական այս օլիմպիադաներին մասնակցութիւնը, իրապէս մեծ ներգործութիւն է ունեցել աշակերտների գիտելիքների աճի եւ անհատականութեան կայացման գործում նա նշեց, որ համահայկական այս ծրագրին բարձր մակարդակով ներկայութիւն ապահովելու նպատակով, աշակերտների համար կազմակերպւել են հայ գրականութեան, հայոց պատմութեան եւ հայ մշակոյթի պատմութեան շաբաթական դասընթացներ, դասաւանդութեամբ ուսուցչուհիներ՝ Անահիտ Թահմազեանի, Սեդա Դիլանչեանի, Քառոլին Դիլանչեանի ու Սօսէ Պօղոսեանի:

Շարունակութեան արտայայտւեցին ուսուցչուհիներ Անահիտ Թահմազեանը եւ Սօսէ Պօղոսեանը, անդրադառնալով նախորդ օլիմպիադաներից գեղեցիկ յիշողութիւններին ու փորձառութիւններին:

Աշակերտների անունից երախտիքի խօսք ասաց Լիլիթ Հայրապետեանը, իսկ ծնողների կողմից շնորհակալական խօսք արտայայտեց Լորեթա Յակոբեանը:

Վերջում ներկաները միասնաբար արտասանեցին Տէրունական աղօթքը եւ պատւիրակութեան անդամներն ստացան առաջնորդ Հայր Սուրբի օրհնութիւնը, ինչպէս նաեւ Կրօնական խորհրդի կողմից հրատարակւած աղօթագրքեր եւ խաչքարերի մասին գրքոյկը: Հանդիպումն աւարտւեց հաւաքական յիշատակի լուսանկարով:



# ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 8-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՈՒԺԵՂԱԳՈՅՆ ԽՈՒՄԲԸ ՃԱՆԱՉՈՒԵՑ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ



ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութեան նախաձեռնութեամբ, Աղւերանում անցկացուած Հայագիտական համահայկական 8-րդ օլիմպիադայի արդիւնքում, ուժեղագոյն խումբը ճանաչւեց Նոր Ջուղայի աշակերտական պատուիրակութիւնը: Այս յաջողութիւնը ձեռք է բերւում երրորդ անընդմէջ անգամ, քանի որ համայնքիս գերազանցիկ աշակերտները 6 եւ 7-րդ օլիմպիադաներում նոյնպէս արժանացել են սոյն պատուաւոր կոչումին:

Մրցոյթին այս տարի մասնակցել էին 78 աշակերտներ՝ 9 երկրների 21 զանազան համայնքներից: Նոր Ջուղայի աշակերտական խմբին մաս էին կազմել հայոց ազգ. «Քանանեան» աղջկանց եւ «Կատարինեան» տղայոց միջնակարգ դպրոցների գերազանցիկ աշակերտներից ութ հոգի՝ Լուսիա Գալստանեանը, Լիլիթ Հայրապետեանը, Վանէ Օրոջեանը, Անի Մկրտչեանը, Ռենիա Մինասեանը, Դերիկ Յակոբեանը, Վահագն Հայրապետեանը եւ Արսիս Յովհաննիսեանը. խմբին որպէս պատասխանատուներ ընկերակցում էին «Քանանեան» դպրոցի ուսուցչուհի Անահիտ Սարհադեանն ու Կրթական խորհրդի անդամ Նարբէ Զարդն Դաւուդը:

Յատկանշական է, որ մասնակիցների ընտրութիւնը կատարուել էր Կրթական խորհրդի եւ զոյգ դպրոցների պատասխանատու կազմերի նախաձեռնութեամբ անցկացուած մրցոյթի արդիւնքում, իսկ նրանց ուսուցման գործը վստահուած էր ուսուցչուհիներ՝ Անահիտ Թահմազեանին, Սեդա Դիլանչեանին, Քառոլին Դիլանչեանին եւ Սօսէ Պօղոսեանին՝ ղեկավարութեամբ «Քանանեան» դպրոցի փոխ-տնօրէն Ռիմա Սիմոնեանի, ով Կրթական խորհրդի կողմից նշանակուել էր որպէս պատկան ուսումնական ծրագրի պատասխանատու:



8-րդ օլիմպիադայի հայոց լեզուի, հայ գրականութեան եւ հայոց պատմութեան բաժնում՝ խումբն արժանանացել է մէկ առաջին, մէկ 2-րդ եւ երեք 3-րդ կարգի դիպլոմների ու մէկ շնորհակալագրի՝ հետեւեալ կարգով.

Լուսիա Գալստանեան՝ առաջին կարգի դիպլոմ.

Լիլիթ Հայրապետեան 2-րդ կարգի դիպլոմ.

Վանէ Օրոջեան, Անի Մկրտչեան եւ Դերիկ Յակոբեան 3-րդ կարգի դիպլոմ.

Ռենիա Մինասեան՝ շնորհակալագիր:

Երգի բաժնում Լուսիա Գալստանեանն արժանացել է պատուոգրի, իսկ Լիլիթ Հայրապետեանը ասմունքում՝ շնորհակալագրի:

Յաջողութիւն մաղթելով աշակերտներին ու պատասխանատուներին՝ նորանոր նուաճումներ ենք ցանկանում նրանց:

* * *



Խորապէս գնահատելով Հայագիտական Համահայկական 8-րդ օլիմպիադայում Նոր Ջուղայի աշակերտութեան արձանագրած գերազանց յաջողութիւնները՝ ի մասնաւորի ուժեղագոյն խմբի պատուաւոր կոչումին արժանանալը, բոլորին մաղթում ենք նորանոր վերելքներ եւ յառաջադիմութիւն կրթութեան ասպարէզում: Վստահ ենք, որ այս փայլուն ձեռքբերումը նոր ուժ ու խթան է հանդիսանալու մեր աշակերտների համար՝ իրենց գիտելիքները հայագիտութեան ոլորտում առաւել կատարելագործելու առումով:

Անտարակոյս այս յաջողութեան համար մեր աշակերտների աշխատասիրութեան եւ նրանց ծնողների բծախնդրութեան ու համագործակցութեան հետ մէկտեղ պարտական ենք նաեւ հայ դպրոցին, տարիներ շարունակ աշակերտների հայեցի դաստիարակութեամբ զբաղուած, նրանց՝ մայրենի լեզուի, գրականութեան եւ հայ մշակոյթի վերաբերեալ գիտելիքներ եւ սէր փոխանցելու գործում ջանք ու եռանդ չխնայած մանկավարժներին, ուսուցիչներին, Օլիմպիադային նախապատրաստելու դաստիարակներին եւ խմբի պատասխանատուներին, որոնց արժանին հատուցեցին մեր գերազանցիկները:

Սիրելի աշակերտներ, թանկագին ուսուցիչներ, պատասխանատուներ եւ ծնողներ, շնորհաւոր բոլորիս այս յաջողութիւնը:

ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

## ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՃԱՄԲԱՐ ԴԷՊԻ ԱՐՑԱԽ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ՝ Հ.Յ.Դ. «ՌՈՒԲԷՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Հ.Յ.Դաշնակցութեան «Ռուբէն» երիտասարդական միութեան վարչութիւնն իր դաստիարակչական աշխատանքների ծիրում, 2017 թւականի յուլիսի 16-ից 27-ը, ճանաչողական ճամբար կազմակերպեց Արցախում եւ Հայաստանում, 30 միութենականների մասնակցութեամբ:



Այցելութիւնների շարանը մեկնարկեց յուլիսի 18-ին, Արցախում: Նախ խումբը եղաւ Գանձասարի վանքում, ապա մեկնելով Ղշլաղ գիւղ, այցելեց Նիկոլ Դումանի տուն-թանգարան, որտեղ առաւել չափով իրազեկւեց նիրեալ հերոսի եւ Խանասորի արշաւանքի հրամանատար Վարդանի գործունէութեանը: Նրանք Ստեփանակերտում այցելեցին քաղաքի խորհրդանիշ տատիկ-պապիկի յուշարձանը եւ Զոհւած ազատամարտիկների թանգարանում՝ բացայայտեցին արցախեան ազատամարտի իրողութիւնից նորանոր ծալքեր, իսկ Շուշիում տպաւորւեցին Ս. Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցի եւ Շուշիի բերդ կատարած այցելութիւններով: Երիտասարդները առիթ ունեցան նաեւ ներկայ գտնւելով ԼՂՀ բանակի զօրանոցներից մէկում, մօտիկից ծանօթանալ հայ զինւորների առօրեային:

Արցախեան շրջագայութիւնները աւարտւեցին յուլիսի 21-ին, երբ խումբը շարժւեց դէպի Հայաստան: Նրանք ամենասկզբում այցելեցին «Տաթեւ» վանք՝ վայելելով դէպի սոյն խորհրդաւոր վայրը տանող ճոպանուղիով ուղեւորութեան հաճելի պահը: Այնուհետեւ յաջորդ օրերի ընթացքում այցելութիւններ կատարեցին դէպի Սեւանայ լիճ, Ապարան, Սարդարապատի յուշահամալիր-թանգարան, Երեւանի քաղաքային գերեզմանոց (պանթէոն), Եռաբլուր, Հ.Յ.Դ. Բիւրոյի թանգարան, Ծիծեռնակաբերդի յուշահամալիր-թանգարան եւ մի շարք այլ տեսարժան վայրեր: Ռեմականները քաղաքային գերեզմանոցում իրենց յարգանքի տուրքը մատուցեցին դաշնակցական գործիչներ՝ Արամ Մանուկեանի, Վահան Յովհաննիսեանի եւ Հրայր Մարուխեանի յիշատակին, իսկ Եռաբլուրում նրանց խորհրդաւոր



այցը նշանաւորեց ի մասնաւորի զոհւած մարտիկների հոգիների խաղաղութեան եւ հայ զինւորների առողջութեան համար՝ մատուռում առ Աստւած բարձրացւած աղօթքով:



Ճանաչողական շրջագայութիւններին զուգահեռ տեղի ունեցան նաեւ մի շարք ուսուցողական հանդիպումներ. նրանք Արցախ եղած ժամանակաշրջանում, հիւրընկալւելով Հ.Յ.Դ. Ստեփանակերտի «Նիկոլ Դուման» կենտրոնում, հանդիպեցին շրջանի Կենտ. Կոմիտէի անդամ Ժիրայր Ծահիջանեանին՝ հիմնականում զրոյց ծաւալելով Արցախում Դաշնակցութեան իրականացրած ծրագրերի եւ ապագայ անելիքների շուրջ, իսկ ԼՂՀ խորհրդարանի յարկի տակ, խորհրդարանի փոխնախագահ Վահրամ Բալայեանի միջոցով հաղորդ դարձան Արցախի ներկայ իրավիճակին եւ քաղաքական ու տնտեսական ոլորտներում պետութեան հեռանկարային ծրագրերին: Երեւանում, հանդիպում կայացաւ Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ, Հ.Յ.Դ. Հայ Դատի եւ քաղաքական հարցերի գրասենեակի ղեկավար Կիրօ Մանոյեանի հետ, ուր իրազեկւեցին Հայ Դատի գրասենեակների աշխատանքների, ձեռքբերումների եւ ապագայ անելիքների վերաբերեալ:

Նշելի է, որ ճամբարախումբը թէ Արցախում եւ թէ Հայաստանում առանձին հանդիպումներ իրականացրեց նաեւ երկու շրջանների երիտասարդական միութիւնների պատասխանատու մարմինների ներկայացուցիչների հետ՝ ծանօթանալով միմեանց գործունէութեանը եւ այդ շրջագծում տեսակէտներ փոխանակելով:

Երիտասարդ միութենականների ճանաչողական ճամբարն իր աւարտին հասաւ յուլիսի 27-ին, եւ նրանք նոյն օրը ուղեւորւեցին դէպի Սպահան, հարազատ Նոր Ջուղա:



# ԼԻՍԲՈՆԻ ՀԻՆԳ ԱՆՁՆԱԶՈՀ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՖՈՒՏԲՈԼԻ ԽԱՂԵՐ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Նախաձեռնութեամբ Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Սկաուտական միաւորի Գերագոյն մարմնի եւ կազմակերպութեամբ սկաուտներից կազմուած գործադիր յանձնախմբի, շաբաթ՝ օգոստոսի 5-ի երեկոյեան, նոյն միութեան մարզասրահում տեղի ունեցաւ Լիսբոնի հինգ մարտիկներին նուիրուած ֆուտբոլի մրցաշարի բացման հանդիսութիւնը:

Երեկոն սկսուեց դրօշակի արարողութեամբ, որից յետոյ ներկաները մէկ րոպէ յոտնկայս լռութեամբ յարգեցին հինգ մարտիկների յիշատակը: Յաջորդիւ հանդիսատեսին ողջունեց եւ բացման խօսքով հանդէս եկաւ սկաուտ Վանիա Պետրոսեանը, ապա Գերագոյն մարմնի խօսքն ընթերցեց Թանգիկ Միրզախանեանը, որից յետոյ տեղի ունեցաւ «Արարատե» եւ «Գանձասար» խմբերի միջեւ մրցախաղը:

Երեկոն իրենց ներկայութեամբ պատուել էին Հայ դատի յանձնախմբի, Թեմական խորհրդի եւ «Արարատ» միութեան Կենտրոնական վարչութեան ներկայացուցիչները եւ հինգ մարտիկների յիշատակը յարգող այլ հայորդիներ: Յիշեցնենք, որ այս մրցաշարը ամենամեայ կարգով տեղի է ունենում Նոր Ջուղայում, որին մասնակցում են համայնքի երիտասարդներից կազմուած ֆուտբոլի սիրողական խմբեր: Հինգ օր տեւողութեամբ խաղերին մասնակցեցին՝ «Արարատ», «Սարդարապատ», «Գանձասար», «Գետաշէն» եւ «Վիշապ» խմբերը. խաղերի փակումը տեղի ունեցաւ չորեքշաբթի՝ օգոստոսի 9-ին:

Մրցաշարի մասնակիցներին գնահատելու եւ արժեւորելու նպատակով ուրբաթ՝ օգոստոսի 11-ին, Նաւասարդի տօնի առիթով կազմակերպուած հանդիսութեան ընթացքում շնորհակալագրեր յանձնուեցին մասնակից մրցավարներին, իսկ առաջին եւ երկրորդ տեղերը զբաղեցրած «Սարդարապատ» եւ «Արարատ» խմբերին յանձնուեցին գնահատագրեր եւ յուշանուէրներ: Գնահատագրերը եւ յուշանուէրները յանձնեցին միութեան Կենտրոնական վարչութեան նախագահ՝ Մասիս Մինասեանը, Սկաուտական միաւորի գերագոյն մարմնի անդամ՝ Թանգիկ Միրզախանեանն ու կազմակերպիչ յանձնախմբի նախագահ՝ Սեպուհ Վարդանեանը: Մրցաշարի կազմակերպման գործում իրենց համագործակցութիւնն էին բերել միութեան Ֆուտբոլի յանձնախումբը, իսկ մրցավարութիւնը անշահախնդրօրէն ստանձնել էին Մելքոն Քեշիշեանը, Կարօ Ճահբազեանը եւ Էդմոնդ Բաղդասարեանը: Մրցաշարի կազմակերպիչ յանձնախումբը ներկայացնում էին Սեպուհ Վարդանեանը, Մասիս Սիրջանեանը, Նարեգա Սիմոնեանը, Ճանթ Մելքոմեանը, Ռուբէն Խոսրովեանը եւ Լուսին Յովսէփեանը. Գերագոյն մարմնի եւ յանձնախմբի կապ էր նշանակուած Թանգիկ Միրզախանեանը:

Յարգանք ու պատիւ Լիսբոնի հինգ մարտիկներ՝ Վաչէ Դաղլեանին, Արա Քերջլեանին, Սիմոն Եահըանեանին, Սեդրակ Աճեմեանին եւ Սարգիս Աբրահամեանին, ովքեր 1983 թւականին անձնազոհական մի ակտով Պորտուգալիայի մայրաքաղաք՝ Լիսբոնում, Թուրքիայի դեսպանատան 3-ժամեայ գրաւումից յետոյ պայթեցրեցին այն եւ ողջակէզ դարձան փլատակների տակ՝ աշխարհին պատգամելով Հայ Դատի արդար լուծման պահանջատիրութիւնը:









## ԱՐՑԱԽԻ ՀԵՐՈՍՆԵՐԻՆ ԵՒ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ «ԿԵԱՆՔ ՈՒ ԿՌԻՒ» ՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ



Նախաձեռնութեամբ Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Սկաուտական միաւորի Գերագոյն մարմնի, չորեքշաբթի՝ օգոստոսի 30-ի երեկոյեան, նոյն միութեան սրահում ցուցադրուեց ռեժիսոր Մհեր Մկրտչեանի Արցախի հերոսներին եւ ՀՀ անկախութեան 25-ամեակին նուիրուած՝ «Կեանք ու կռիւ» ֆիլմը:

Ձեռնարկը իրենց ներկայութեամբ պատուել էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Շահինշահրի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, ազգային իշխանութեան ներկայացուցիչները եւ հոծ թւով ներկաներ:

Հանդիսատեսին ողջունելով սկաուտ՝ Վանիա Պետրոսեանը, հակիրճ կերպով անդրադարձաւ Արցախի ազատագրման շարժմանն ու ՀՀ անկախացման պատմականին եւ ներկայացրեց ֆիլմի բովանդակութիւնը, որն է՝ արցախեան հերոսամարտը, հիմքում ունենալով սէր, ընկերութիւն, հայրենասիրութիւն եւ մարդկային արժէքներ:

Յիշեցնենք, որ ֆիլմը 2016 թւականին Pan Armenian Entertainment Awards-ում ճանաչուել է տարուայ լաւագոյն ֆիլմ:




## ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԱՐՑԱԽ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳԹՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ

Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան միութեան նախաձեռնութեամբ, թւականիս յուլիսի 8-ից 16-ն ընկած ժամանակահատուածում, ճանաչողական ճանապարհորդութիւն կազմակերպուեց դէպի Արցախ, որին մասնակցութիւն էին բերել թւով 16 հոգի՝ բաղկացած համայնքիս անդամներից եւ կազմակերպիչ միութեան անդամուհիներից:



Խումբը մեկնումից մէկ օր առաջ, ուրբաթ՝ յուլիսի 7-ի առաւօտեան, առաջնորդանիստ Ս. Ամենափրկիչ վանքի Ծաղկեայ դահլիճում ստացաւ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի օրհնութիւնը, ապա շաբաթ՝ յուլիսի 8-ի կէսօրից յետոյ հանրակառքով ուղեւորուեց դէպի Արցախ, որտեղ էլ կայացաւ հետաքրքիր, յուզառատ եւ անմոռանալի շրջագայութիւնը:

Այցելութիւնների մեկնարկը տրուեց Ստեփանակերտ հասնելուն պէս՝ յուլիսի 9-ի երեկոյեան, երբ խումբը հիւրանոցում հաստատուելուց յետոյ, շրջագայեց քաղաքում եւ այցելեց սոյն քաղաքի խորհրդանիշը դարձած տատիկ-պապիկի յուշարձանը:

Այնուհետեւ նախապէս կազմած ծրագրի համաձայն յաջորդ օրերի ընթացքում խումբն այցելեց Գանձասարի վանք, Ղշլաղ գիւղում գտնուող Նիկոլ Դումանի տուն-թանգարան, Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցի, Շուշիի բերդ եւ Հունոտի կիրճ, Տնջրի աղբիւր, Ամարասի վանական համալիր, Տիգրանակերտ բերդ, Դադիվանք, գորգագործութեան գործարան եւ այլ տեսարժան վայրեր: Յատկանշական է, որ Դադիվանքում եկեղեցու ծխատէր քահանայ Տէր Յովհաննէսը եւ խմբի անդամները միասնական աղօթք բարձրացրին առ Աստուած Արցախի պատերազմի ընթացքում զոհուած ազատամարտիկների հոգիների հանգստութեան եւ հայրենի երկրի սահմանների խաղաղութեան համար:

Շրջագայողները անմոռանալի պահեր ապրեցին յատկապէս Ասկերանի շրջանի զօրանոցներից մէկում, որտեղ մօտիկից ծանօթացան հայ զինուորների առօրեային: Նրանք Արցախի Հանրապետութեան առաջին նախագահ Արթուր Մկրտչեանի շիրիմ կատարած այցելութեամբ իրենց յարգանքի տուրքը մատուցեցին նրա վառ յիշատակին, իսկ ներկայ գտնուելով Շահումեանի շրջանի զոհուած ազատամարտիկների յիշատակին կանգնեցուած խաչքարի մօտ, ծաղիկներ զետեղեցին այնտեղ:

Սոյն ժամանակահատուածում խումբն առանձին

հանդիպումներ ունեցաւ Հ.Յ.Դ. Արցախի Կենտ. Կոմիտէի ներկայացուցիչ Դաւիթ Իշխանեանի եւ Արցախի ՀՕՄ-ի պատասխանատուների հետ: ՀՕՄ-ի հետ հանդիպման ընթացքում մտերմիկ զրոյցի ներքոյ զեկոյցներ փոխանակեցին Կանանց Գթութեան միութեան եւ ՀՕՄ-ի ծաւալած գործունէութեան շուրջ եւ համաձայնութիւններ կայացան երկու միութիւնների յետագայ համագործակցութեան կապակցութեամբ:

Հարկ է նշել, նաեւ որ անցնող մէկ տարուայ ընթացքում Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան միութեան Արցախի յանձնախումբն ստացել եւ կապոցաւորել էր համայնքիս ժողովրդի նւիրած հագուստները, որոնք շրջագայող խմբի միջոցով տեղափոխւեցին Արցախ եւ յանձնւեցին տեղի ՀՕՄ-ի պատասխանատուներին:

Շրջագայողները Նոր Ջուղա վերադարձան շաբաթ՝ յուլիսի 15-ին, իրենց հետ բերելով հաճելի եւ անմոռանալի յուշեր:




## ՍԲ. ԱՍՏՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԸ ԵՒ ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔԸ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Կիրակի՝ 2017 թ. օգոստոսի 13-ի առաւօտեան, Հայ Առաքելական Ս. եկեղեցու չորրորդ տաղաւար՝ Սբ. Աստուածածնի Վերափոխման տօնի առիթով, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» եկեղեցում տեղի ունեցաւ Ս. եւ անմահ Պատարագ՝ Տ. Սահակ քհնյ. Մինասեանի ձեռամբ եւ դպրաց դասի մասնակցութեամբ:

Օրւայ արարողութեանը ներկայ էին համայնքի վարչութեան ներկայացուցիչները եւ բազում հաւատացեալներ:

Յաւարտ Սբ. Պատարագի քարոզեց պատարագիչ քհնյ. հայրը, ով ամփոփ ներկայացնելով Աստուածամօր կեանքի վերջին տարիների անցուդարձը՝ անդրադարձաւ Ս. Աստուածածնի հոգին աւանդելու եւ առաքեալների ձեռամբ յուղարկաւորւելու եւ ապա Աստուածամօր Ս. մարմինը երկնքում յայտնւելու դրւագին: Քհնյ. Հայրը շնորհաւորելով Ս. Աստուածածնի տօնի կապակցութեամբ՝ մաղթեց բոլոր հաւատացեալներին արեւշատութիւն, յաջողութիւն եւ զօրաւոր հաւատք՝ Բարձրեալի հովանու եւ Տիրամօր բարեխօսութեան ներքոյ:

Օրւայ խորհրդի աւարտին տեղի ունեցաւ Խաղողօրհնէք եւ օրհնւած խաղողը համայնքի «Հայ կանանց եկեղեցասիրաց» միութեան անդամների միջոցով բաժանւեց հաւատացեալներին:





# ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՐԱՖԻՍՏ-ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ ԳԵՂԱՆԻ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ «ՁԵՌՔՈՎ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ» ԱՐՈՒԵՍՏԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Վերջերս երիտասարդ արուեստագէտ Գեղանի Առաքելեանի ստեղծագործութիւնները մեծ ուշադրութեան են արժանացել արուեստասէր խաւի կողմից: Իրանահայ համայնքի այս արժանի զաւակը, իր արուեստն ամբողջութեամբ ի գործ է դրել հայկական մշակոյթը միւս ազգութիւններին առաւել ճանաչեցնելու ուղղութեամբ:

Գեղանին ծնուել է 1993 թուականին, Նոր Ջուղայում: Տարրական ու միջնակարգ կրթութիւնն ստացել է տեղի հայոց ազգային դպրոցներում, այնուհետեւ ընդունուելով «Սեփեհր» համալսարանի գրաֆիկ ճիւղում՝ ուսումը գերազանց աւարտել է լիսանսի մակարդակով: Նա համալսարանական դասապահերին զուգահեռ, զբաղուել է զանազան ձեռքի աշխատանքներով, որոնց շրջագծում էլ, շուրջ երեք տարի առաջ ծանօթացել է ձեռքով տպագրութեան արուեստին:



Արուեստի այս բնագաւառում հեղինակը նախ իր ցանկացած պատկերը փորագրում է փայտի կամ լինոլէոմ հումքի վրայ, ապա բարդ եւ ժամանակատար աշխատանքի արդիւնքում, փորագրուած հումքից պատրաստում շաբլոն, որի միջոցով յատուկ թղթերի վրայ կարողանում է տպագրել իր նախատեսած պատկերը: Պղնձէ հումք ընտրելու պարագային, փորագրութիւնը կատարւում է թթւի միջոցով, որը նոյնպէս դժուար աշխատանք է:

Գեղանիի ձեռքի տպագրութիւններն այնպիսի բարձր որակ ունեն, որոնց դիտելիս հանդիսատեսին թւում է, թէ ցուցադրուած պատկերը գծագրութիւն է:

Երիտասարդուհին իր ձեռքի աշխատանքները ներկայացրել է երկրի մակարդակում անցկացուած մի շարք միջոցառումներին, ինչու չէ նաեւ Իրանում Փղոսկրեայ Ափ երկրի դեսպանատան կազմակերպած երկրորդ եւ երրորդ փառատօններին՝ արժանանալով կազմակերպիչների բարձր գնահատականներին ու հանդիսատեսի լայն ուշադրութեանը:

Գեղանի Առաքելեանը արուեստասէր խաւի մօտ փայլել է նաեւ իր համալսարանի աւարտական աշխատութեամբ, որտեղ նա հայկական թռչնագրի ձեւով գրել է պարսկերէն այբուբենը: Նրա այս գործի շնորհիւ, որը կրում է «Հայոց այբուբենի գրաֆիկական հնարաւորութիւնների ուսումնասիրութիւնը» խորագիրը, առաւել չափով ճանաչեցուել են յատկապէս հայոց տառերն ու թռչնագիրը:

Նրա ստեղծագործութիւնների իրականացման շարժառիթը հանդիսացել է հայկական մշակոյթի տարածման գաղափարը, ինչը կարելի է նկատել հեղինակի ցանկացած գործից, որտեղ ակնյայտ են հայկական նախշերի օգտագործումը եւ հայի ճաշակի արտացոլումը:

Երիտասարդ արուեստագէտը նպատակ ունի իր ուսումը շարունակել գեր-լիսանսի մակարդակում. նա ցանկանում է նաեւ յետագայում հիմնադրել իր սեփական աշխատանոցը, ուր հնարաւոր կը լինի ստեղծել բազմատեսակ եւ մեծ քանակութեամբ աշխատանքներ եւ յատկապէս իրականացնել իր վաղեմի երազանքը՝ ուսուցանել «Ձեռքով տպագրութիւն» արուեստը:

Նորանոր յաջողութիւններ ցանկանալով Գեղանիին՝ մաղթում ենք նրան կանաչ ճանապարհ եւ մասնագիտական ասպարէզում բեղուն գործունէութիւն:



# ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

**Ն.Ջ. Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութիւն**

***Ս. Գէորգ եկեղեցի***

-3,450,000 ռիալ. Ոմն
-2,840,000 ռիալ. Ոմն
-1,000,000-ական ռիալ. Թենի եւ Թոմիկ Բաղրամեաններ, Ջանէս Գրիգորեան, Մագի Միրզայեան՝ իր թոռան ծննդեան առթիւ
-500,000-ական ռիալ. Գայիանէ Գէորգեան, Թադէ Աղազարեան
-300,000 ռիալ. Օդեթ Ծատուրեան՝ հանգուցեալ Ռազմիկ Հայրապետեանի մահուան քառասունքի առթիւ, Ոմն
-210,000 ռիալ. Սաջադ Էթեմադի
-200,000-ական ռիալ. Անիթա Յովսէփեան, Հրանուշ Դեհբաշեան, Ջուլիա
-150,000 ռիալ. Արուսեակ Պօղոսեան
-115,000 ռիալ. Թորոսեան
-100,000 ռիալ. Վաչէ Շահիջանեան

***Խաչի զոյգելու համար***

-600,000 ռիալ. Քառոլին Օշկանեան
-200,000 ռիալ. Ռիմա Մաքիեան, Ոմն
-100,000 ռիալ. Ռիմա Յովսէփեան, Արմէն Բաղումեան, Ալինա եւ Արմէն Խաչիկեաններ, Բալիկ Ղարախանեան

***Ս. Մինաս եկեղեցի***

-200,000 ռիալ. Մինուշ եւ Թադէ Քարամեաններ

***Ս. Աստուածածնի վերափոխման տօնի առթիւ***

-200,000-ական ռիալ. Անի Թորոսեան, Միրօ եւ Մխիթար Խուդավերդեաններ, Մարօ Բաղումեան
-150,000 ռիալ. Եզնիկ եւ Սիրան Ղարիբեաններ
-50,000 ռիալ. Տիգրանուհի Թորոսեան

***Ս. Յովհաննու եկեղեցի***

-300,000 ռիալ. Ոմն

***Ս. Աստուածածնի վերափոխման տօնի առթիւ***

-2,000,000 ռիալ. Անուշաւան Իսաղուլեան
-1,000,000 ռիալ. Զաւէն Մուրադեան
-500,000-ական ռիալ. Երանուհի եւ Մարօ եւ Ռուբինա Մանսուրեաններ, Քարմէն եւ Շաքէ եւ Ադրինէ Ղեւեաններ, Սելին եւ Կարէն Ղարիբեաններ, Լեւոն Ղազարեան, Գուրգէն Թահմազեան, Էդնա Փուլադեան, Հրաչ Մովսիսեան, Հերմինէ Թահմազեան
-300,000 ռիալ. Սոնա Զարգարեան
-200,000-ական ռիալ. Սիրան Ասատրեան, Քեւին Մինաս-Խաչիկեան, Արփա Տէր-Մարտիրոսեան, Անդրանիկ Յովսէփեան, Վեդի Օրոջեան, Վարդուշ Սարուխանեան՝ Գալստան Սարուխանեանի յիշատակին, Ռիմա Դիլանչեան, Մարօ Թորոսեան, Ադրինէ Աղախանեան, Լինա Ղազարեան՝ Լորեթա Ղազարեանի յիշատակին, Շահէն եւ Հրանուշ Տէր-Յովհաննիսեաններ
-100,000-ական ռիալ. Ռիմա Գրիգորեան, Հերոս Բաղդասարեան, Սօսէ եւ Սիւնէ եւ Սարինէ, Արմինէ Թահմազեան՝ Վրէժ Տէր-Յովհաննիսեանի յիշատակին, Զաւէն Կիրակոսեան, Հերոս, Շահին, Բիթա

***Ս. Ստեփանոս եկեղեցի***

-500,000 ռիալ. Հայ Ուս. Չհարմահալ միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղ

***Ս. Աստուածածնի վերափոխման տօնի առթիւ***

-300,000 ռիալ. Հրանուշ Փանոսեան
-200,000-ական ռիալ. Վազրիկ եւ Քառոլին Վարդանեաններ, Լիդա Ծառուկեան, Լալա Բաղդասարեան, Սիլվարդ Ղարիբեան, Ոմն
-100,000 ռիալ. Նազելի Աւետեան

***Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի***

***Ս. Աստուածածնի վերափոխման տօնի առթիւ***

-500,000-ական ռիալ. Հռիփսիկ Համբարձումեան, Աւօ Նաւասարդեան, Վայլէթ Հայրապետեան
-300,000-ական ռիալ. Գեւիկ եւ Գեղանի եւ Յուսինէ Ղարիբեաններ, Գրիշ Դիլանչեան
-200,000-ական ռիալ. Արթուր եւ Միգանուշ Սարգսեաններ, Մարօ Ծատուրեան, Էմին Դաւթեան, Դիանա Ղարախանեան, Թադէոս Մինասքանեան, Մագի Հայկունեան, Ոմն (2 պարագայ)
-100,000-ական ռիալ. Արաքս Աւետեան, Լուսինէ Սէթ-Աղայեան, Քայլէթ Սիմոնեան, Անի Սարգսեան, Օդէթ, Մարօ Դարաբիդեան, Անուշ Անգինէ Տէր Յովհաննիսեան, Ոմն (5 պարագայ)

***Հանգուցեալ Արամ Վարդանեանի յիշատակին***

-500,000-ական ռիալ. Նոր Ջուղայի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւն, Քառոլին Վարդանեանի ընկերուհիներ
-400,000 ռիալ. Ասպետ եւ Լորէթա Վարդանեաններ
-300,000-ական ռիալ. Ս. Ստեփանոս եկեղեցու Կանանց յանձնախումբ, Գառնիկ Բաղդասարեան
-200,000-ական ռիալ. «Շուշանիկ» երգչախումբ եւ Կանանց հոգեւոր լսարան, Յովսէփ եւ Անուշ Լալազարեաններ, Ռազմիկ եւ Էլմա Վարդանեաններ, Աննիկ Քեշիշեան, Արմոնդ Վարդանեան
-150,000-ական ռիալ. Լորիկ Բաղդասարեան, Սիլվարդ Թորոսեան, Լալա Բաղդասարեան
-100,000 ռիալ. Բալաս Դիլանչեան

***Հանգուցեալ Գէորգ Մկրտչեանի յիշատակին***

-500,000 ռիալ. Ալիս Թահմազեանի խումբ

-400,000 ռիալ. «Անի» շէնքի բնակիչներ
-300,000-ական ռիալ. Ալֆրեդ Միրզաեանեան, Աբդալ Յովսէփեան, Մերի եւ Նինա Վարդանեաններ, Ղուկաս Գրիգորեան
-200,000-ական ռիալ. Վարդան Զարեան, Արմէն Ղուկասեան, Անդրանիկ Ղազարեան

*Հանգուցեալ Նազանդ Տատուրեան-Փաթաթանեանի յիշատակին*
-1,000,000 ռիալ. Ծաղկուշ եւ Հայկազ Դաւթեաններ
-300,000 ռիալ. Կայծակ եւ Դիանա Ղարախանեաններ
-200,000-ական ռիալ. Սիրանուշ Յովսէփեան, Քլար Խաչաքի, Նժդեհ Տէր-Յովհաննիսեան
-150,000-ական ռիալ. Սիլվարդ Թորոսեան, Սիրան Սարեան
-100,000-ական ռիալ. Լուսիկ Ղազարեան-Յովսէփեան, Համազ Մարգարեան

*Հանգուցեալ Ղազար Թահմազեանի յիշատակին*
-600,000 ռիալ. Մինաս Թահմազեան
-500,000 ռիալ. Ստեփան Մինասեան
-200,000 ռիալ. Գուրգէն Թահմազեան
-150,000 ռիալ. Թամար Գրիգորեան
-50,000 ռիալ. Բալաս Դիլանչեան

*Հանգուցեալ Մկրտիչ Մկրտչեանի յիշատակին*
-700,000 ռիալ. Շահինշահրի Կանանց Եկեղեցասիրաց միութիւն
-500,000 ռիալ. Արթուր եւ Միգանուշ Սարգսեաններ
-300,000-ական ռիալ. Վազրիկ Մարկոսեան, Հերոս Աւանէսեան
-250,000-ական ռիալ. Արսէն Շահբազեան, Մինաս Թահմազեան
-100,000 ռիալ. Ջանիկ Առաքելեան

*Հանգուցեալ Հայկազ Մուսախանեանի յիշատակին*
-1,000,000 ռիալ. Աշխէն Մկրտչեան
-300,000-ական ռիալ. Վանուշ եւ Ռայմոնդ Մարկոսեաններ, Ֆրիդա Մկրտչեան
-200,000 ռիալ. Յաւերժիկ Կարապետեան
-150,000-ական ռիալ. Մանուշ Ծատուրեան, Մարօ Ծատուրեան
-100,000 ռիալ. Երանուշ Թահմազեան

*Հանգուցեալ Սանդուխտ Դիլանչեան-Սիմոնեանի յիշատակին*
-300,000 ռիալ. Արմէն եւ Մառիթա Մանուրեաններ
-200,000-ական ռիալ. Քլար Խաչաքի, Միսակ Թահմազեան, Գրիշ եւ Ֆլոր Թորոսեաններ, Աղաւնի Մարկոսեան
-150,000 ռիալ. Բալասան Դիլանչեան-Ղարիբեան

*Հանգուցեալ Գալստան Պարսամեանի յիշատակին*
-300,000 ռիալ. Գալստան Փանոսեան
-100,000-ական ռիալ. Ջանիկ Առաքելեան, Սամուէլ Ասատրեան

*Հանգուցեալ Արծուիկ Մելիքեան-Պօղոսեանի յիշատակին*
-200,000 ռիալ. Արա Սարգսեան

*Հանգուցեալ Խանում Խուդավերդեանի-Ղազարեանի յիշատակին*
-500,000-ական ռիալ. Արշալոյս եւ Ծաղկանուշ Խուդավերդեաններ, Սեւան եւ Սոնա եւ Անդրէ եւ Սեւան Ղազարեաններ, Վիգէն Ղազարեան
-400,000-ական ռիալ. Ս. Մինաս եկեղեցու Կանանց յանձնախումբ, Սարդար Ղազարեան
-200,000-ական ռիալ. Աբգար Ղազարեան, Ղազար եւ Անահիտ Յովսէփեաններ
-150,000 ռիալ. Լուսիկ Յարութիւնեան
-100,000 ռիալ. Մասիս Քեշիշեան

*Հանգուցեալ Էլինա Շիրւանեան-Ղարիբեանի յիշատակին*
-500,000 ռիալ. Սարօ եւ Ալիս Դիլանչեաններ

**«Արմէն» Երկսեռ Կրթահամալիր**
-5,000,000 ռիալ. Վարուժ Մինասեան
-1,500,000 ռիալ. Սիսիան Մարկոսեան
-1,000,000-ական ռիալ. Կարօ Յովսէփեան, Մայիս Օհանեան, Յասմիկ Դաւթեան, Թենի Զարդն Դաւուդ, Էմանուէլ Ասատրեան, Անի Մինասեան
-500,000-ական ռիալ. Ն. Ջ. Հայոց Ազգային «Քանանեան» դպրոց, Երրորդ «Ա» դասարան, Սինթիա Պօղոսեան, Սելին Մարութեան, Էմանուէլ Մարկոսեան, Արմէն Դադանեան, Թադէ Խուդավերդեան, Ադրիանա Գրիգորեան, Վիվիանա Միրզայեան, Արփին Դիլանչեան, Նարեկ Մարկոսեան, Թէդի Դաւթեան, Թէդի Թահմազեան, Արամէ Ալեքսանդրեան, Վահագն Մինասեան, Անիա Խաչեան, Արէն Զարգարեան, Խաթունիկ Ալեքսանդրեան
-300,000-ական ռիալ. Ն. Ջ. Հայոց Ազգային «Կատարինեան» դպրոց, Լուսիա Մինասեան, Էրիկ եւ Իւրիկ Եղսանեաններ, Արամէ Դադանեան, Լեւոնէլ Թահմազեան, Արփինէ Մովսիսեան
-200,000-ական ռիալ. Անիա Յովսէփեան, Էմիլի Պօղոսեան, Սելինէ Օրդուբէգեան, Հանրի Հաթամեան
-Ջանօն Աղաբաբայեան՝ դպրոցի բակում պատկերների տպագրութեան եւ տեղադրման աշխատանքի բոլոր ծախսերը

**Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» Միութեան Սկաուտական միաւոր**
-1,000,000 ռիալ. Դաւին Յովհաննիսեան

**Ն. Ջ. Հայ Կանանց Գթութեան Միութիւն (Կարմիր խաչ)**
-3,000,000 ռիալ. Մանուշ Եարիջանեան՝ իր ծնողների՝ Յարութիւն եւ Փերիջան եւ իր քրոջ ու եղբօր՝ Արաքս եւ Մասիս Եարիջանեանների յիշատակին
-1,000,000-ական ռիալ. Աչօ Պօղոսեան՝ Աստղիկ Ղարիբեանի յիշատակին, Հեղգա Ղազարեան, Մինաս Ղուկասեան

-700,000 ռիալ. Մահմուդիէ
-500,000-ական ռիալ. Խաչիկ Ռոստոմլու, Ոմն, Ոմն պարսկուհի
-Սնունդ եւ սննդամթերք. ոմն պարսկուհի
-Ճաշ եւ թխուածքներ. Սոնա Թումաթարեան՝ Համբարձում տօնի առթիւ
-Քաղցրաւենիք. Արսինէ, Ոմն
-Սուրճի հիւրասիրութիւն. Ժենիկ Տէր-Գրիգորեան, Այվէն, Գասպար Շահմիրզայեան
-Թխուածքներ. Ն. Ջ. Հայոց ազգ. «Քանանեան» դպրոց, Օֆիկ Ղազարեան, Վարդուշ Ղազարեան, կոյսեր, ոմն պարսկուհի
-Ջատկեայ հաւկիթ եւ քաղցրաւենիք. Մառիթա Մովսիսեան
-Գուլպայ. Մարգարիտ Ջարգարեան

**Ն.Ջ. Հայ Դատի Յանձնախումբ**
-2,500,000 ռիալ. Վազրիկ եւ Քառոլին եւ Սեպուհ Վարդանեաններ՝ Արամ Վարդանեանի յիշատակին
-1,000,000 ռիալ. Օֆիկ Վարդանեան՝ Արամ Վարդանեանի յիշատակին
-500,000-ական ռիալ. Յովիկ եւ Նարէ եւ Նազելի Աւետեաններ՝ Արամ Վարդանեանի յիշատակին, Հայդուկ եւ Արաքս Մարգարեաններ՝ Արամ Վարդանեանի յիշատակին

**Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբ**
***Երիտասարդական երգչախմբի տարեկան համերգի առթիւ***
-2,000,000-ական ռիալ. Սպահանի Հայոց Թեմի Կրթական խորհուրդ, Հայ Դատի յանձնախումբ
-1,000,000-ական ռիալ. Վրէժ Տէր-Մարտիրոսեան, Արթուր Բաղրամեան, Դաւիթ Թորոսեան, Կարինէ եւ Արմէն Խաչիկեաններ, Ջարեհ Թորոսեան, Թանիա Մինասեան
-700,000 ռիալ. Վանա Շիրւանեան
-600,000-ական ռիալ. Մարինէ Ասատրեան, Մարինէ Հայրապետեան
-500,000-ական ռիալ. Շահինշահրի Հայ Կանանց Եկեղեցասիրաց միութեան վարչութիւն, Հայ Կանանց Գթութեան միութիւն, Հայուհեաց Բարեգործական ընկերութիւն, Հայ Ուս. Զհարմահալ միութիւն, Փերիոյ Կրթ. միութիւն, Ն. Ջ. Հայոց Ազգային Մանկապարտէզ-Նախակրթարանի տեսչութիւն եւ ուսուցչական կազմ, Ն. Ջ. Հայոց Ազգային «Արմէն» կրթահամալիրի տեսչութիւն եւ ուսուցչական կազմ, Ն. Ջ. Հայոց Ազգային «Քանանեան» դպրոցի տեսչութիւն եւ ուսուցչական կազմ, Ն. Ջ. Հայոց Ազգային «Կատարինեան» դպրոցի տեսչութիւն եւ ուսուցչական կազմ, Ս. Ա. Վանքի «Տաթեւ» երգչախմբի վարչութիւն, «Շուշանիկ» երգչախումբ եւ կանանց հոգեւոր լսարան, Ս. Ա. Վանքի «Տաթեւ» երգչախմբի խմբավար՝ Համիկ Ալեքսանդրեան, Մեղրի Կարապետեան, Սեւան Խաչատրեան, Խաթունիկ Բաբումեան, Մարօ Ղարախանեան, Մարինէ Մխիթարեան, Անահիտ Թէյմուրեան, Վոլգա Մեսրոպեան, Մարինէ Մկրտչեան, Գեղանի Յակոբեան, Էդիկ Մանուկեան, Թենի Մկրտչեան, Նարբէ Գրիգորեան, Ալենուշ Ասատրեան, Մարգարիտ Սիրչանեան, Թաթուլ Ալլահվերդեան, Փրէնի Ղազարեան, Արալիկ Գրիգորեան, Օֆիկ Գէորգեան, Ռիմա Սիմոնեան, Թանգիկ Միրզախանեան, Արալիկ Սիմոնեան, Լիդա Յակոբեան, Ալլին Քեշիշեան, Մելանիա Դաւթեան, Վահան Վարդեւանեան, Հարմա Կարապետեան, Րաֆֆի Ալեքսանդրեան, Ալլին Գէորգեան, Սթելա Ղարիբեան, Սօսէ Ասատրեան, Գառնիկ Բաղդասարեան
-400,000-ական ռիալ. Անահիտ Սիմոնեան, Հայկ Խոսրովեան
-300,000-ական ռիալ. Ն. Ջ. Հայոց Ազգային Մանկապարտէզ-Նախակրթարանի Ծնողական խորհուրդ, «Շուշանիկ» երգչախմբի ղեկավար՝ Անուշ Յովհաննիսեան, Ալիս Մուսախանեան, Ռուբինա Ղարիբեան, Մեղմիկ Մանուկեան, Լինա Յարութիւնեան
-250,000 ռիալ. Անիթա Ալեքսանդրեան
-200,000-ական ռիալ. Սարինէ Յարութիւնեան, Նվարդ Վարդանեան, Մեղեդի Մանուկեան

**Ծանր Հիւանդների Հիմնադրամ**
-10,000,000 ռիալ. Եղիա Ծառուկեանի յիշատակին՝ իր ընտանիքի կողմից
-3,000,000 ռիալ. Վարուժ եւ Սթելա Վարդանեաններ՝ Արամ Վարդանեանի յիշատակին
-500,000 ռիալ. Նվարդ Վարդանեան՝ Արամ Վարդանեանի յիշատակին
-300,000-ական ռիալ. «Կոմիտաս» երգչախմբի վարչութիւն՝ Հրանուշ Առաքելեանի յիշատակին, «Կոմիտաս» երգչախմբի վարչութիւն՝ Հայկազ Մուսախանեանի յիշատակին

**Սպահանի հայոց թեմի Բարեսիրական մարմին**
-2,500,000 ռիալ. Օֆիկ Ոսկանեան՝ իր ամուսնու Կարօ Ոսկանեանի յիշատակին
-500,000 ռիալ. Օֆիկ Վարդանեան՝ Արամ Վարդանեանի յիշատակին

**Սպահանի հայոց թեմի Գերեզմանատան Բարեկարգման մարմին**
-1,000,000-ական ռիալ. Մառիթա Յակոբեան, Վազրիկ Մարկոսեան
-500,000-ական ռիալ. Սարգիս Յակոբեան, Վրէժ Շիրւանեան

**«Գոլրիկան» բանտարկեալների ֆոնդին**
-20,000,000 ռիալ. Սպահանի Հայոց Թեմի Թեմական խորհուրդ
-5,000,000-ական ռիալ. Արմոնդ Փանոսեան, Էդօ Ղազարեան, Լեւոն Ղազարեան
-3,000,000 ռիալ. Նոէլ Պարսամեան
-2,500,000 ռիալ. Ռազմիկ Յովսէփեան
-2,000,000-ական ռիալ. Նորիկ Յարութիւնեան, Հայրօ Քեշիշեան
-1,500,000-ական ռիալ. Արշալոյս Դաւթեան, Ալէն Ջարդն Դաւութ
-1,000,000 ռիալ. Հենրիկ Խոջեմալ, Ռոբերթ Բեգլարեան, Էդւարդ Թահմազեան
-500,000 ռիալ. Արարատ Շահիջանեան

**Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» եկեղեցի**

-1,600,000 ռիալ. Շահինշահրի Հայոց Ազգ. «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» Դպրոցների Տեսչութիւն եւ Ուսուցչական Կազմ՝ Արսէն Մատթէոսեանի յիշատակին

-1,000,000-ական ռիալ. Եղսապետ Սոհբաթեան, Մինաս Թահմազեան

-300,000 ռիալ. Էդիկ Խաչիկեան՝ Ռուբիկ Խաչիկեանի յիշատակին

-500,000 ռիալ. Եղսապետ Սոհբաթեան

-100,000 ռիալ. Ծողիկ Մատթէոսեան

***Ս. Աստուածածնի վերափոխման տօնի առթիւ***

-500,000 ռիալ. Մեսրոպ Առաքելեան

-200,000 ռիալ. Մատթէոս Շահբազեան

-150,000 ռիալ. Սուսան Բաբումեան

-100,000-ական ռիալ. Վալերիկ Նազարեան, Էմիլ Մարկոսեան, Ժենիկ Խաչիկեան, Սեդա Բաբումեան

-50,000-ական ռիալ.- Զվարդ Թահմազեան, Կարօ Գալստանեան

*Առաջնորդարանին եւ ազգային կառոյցին առընչւող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւնները՝ «Ալիք»-ի թղթակիցները, «Արարատ» Միութեանը՝ Երանուչ Թահմազեանը, Շահինշահրի հայ համայնքինը եւ տեղի «Արարատ» Միութեան մասնաճիւղինը՝ Վիոլեթ Յարութիւնեանը եւ Աիդա Մուրադեանը։*

*Որոշ լուսանկարներ տրամադրում են Գեւիկ եւ Անդրէ Խաչատրեաններն ու Ֆոտո Հայկը։*

**ՄԵՐ ՀԱՍՑԷՆ**
خلیفه گری ارامنه اصفهان و جنوب ایران
صندوق پستی 81735/115
Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran
WWW.Norjugha.ir
WWW.Vank.ir
E-mail: Sourbv@Yahoo.com
**Tel:** +98–31–36243471-2
**Fax:** +98–31–36270999

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

## «Ալիք»-ը

## Հայաստանի ազգային գրադարանի թւայնացուած համակարգում

Արագ տրամադրւող եւ հասանելի գրադարանային տեղեկութիւնների ապահովում

**Այսօր արդէն «Ալիք»-ի 60 տարիների 76000 էջից աւելի հաւաքածուն տեղադրուած եւ հասանելի է թէ՛ Հայաստանի եւ թէ՛ արտերկրի հանրութեանը**

Հաւաքածուն առցանց գրադարանի տեսքով դրուած է ընթերցողի տրամադրութեան տակ եւ հնարաւոր է դրանց թւայնացուած պատճէնները կարդալ, ուսումնասիրել, տպել եւ ներբեռնել անձնական համակարգչի մէջ:

1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
NATIONAL LIBRARY OF ARMENIA

2




3




4




5




6

